Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

DUAL

# Dual Education –

## Guaranteed Employment!

RESULTS AND STORIES



# Դուալ կրթություն՝

## երաշխավորված աշխատանք

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# CONTENT

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


- Introduction
  Ներածություն ..... 5
- What Is Dual TVET ?
  Ի՞նչ է դուալ ՄԿՈՒ-ն ..... 15
- Piloting of Dual VET In Armenia:
  results and stories
  Դուալ ՄԿՈՒ-ի փորձնական ներդրումը Հայաստանում.
  արդյունքներ եվ պատմություններ ..... 19
- Dual VET In Winemaking
  Դուալ կրթությունը գինեգործության ոլորտում ..... 25
- Dual VET In Tourism
  Դուալ կրթությունը զբոսաշրջության ոլորտում ..... 29
- Dual VET In IT
  Դուալ կրթությունը SS-ում ..... 37
- Dual VET In Engineering (Mechatronics)
  Դուալ կրթությունը ճարտարագիտության
  (մեխատրոնիկա) ոլորտում ..... 41
- Legal Reforms In VET
  Իրավական բարեփոխումներ ՄԿՈՒ ոլորտում ..... 47
- Career orientation events for female students of schools
  Մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ ..... 51
  աշակերտուհիների համար
- VET System And COVID-19 Pandemic
  ՄԿՈՒ համակարգը եվ COVID-19 համավարակը ..... 57

# INTRODUCTION

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

The Private Sector Development and Technical Vocational Education and Training South Caucasus (PSD TVET) Programme is implemented by the Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH on behalf of the Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ).

PSD TVET is a regional programme, operating in the three countries of the South Caucasus - Armenia, Azerbaijan, and Georgia. The goal of the programme is to improve the conditions for sustainable economic development and support inclusive growth particularly in rural regions.

To achieve the goal, the programme is operating in the following fields:

*private sector development*

*support for the strengthening of technical and vocational education and training (VET) sector*

*regional development*

The political partner of the programme in Armenia is the RA Ministry of Economy (MoE). RA Ministry of Education, Science, Culture and Sport (MoESCS) is another key state partner of the programme.

The support programmes particularly piloting of dual VET are implemented in the selected sectors

*tourism*

*winemaking*

*engineering*

*IT*



«Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում Հարավային Կովկասում» (ՄՀՁ ՄԿՈՒ) ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության՝ GIZ-ի կողմից՝ ԳԴՀ տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ:

ՄՀՁ ՄԿՈՒ-ն տարածաշրջանային ծրագիր է, որը գործում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագրի նպատակն է բարելավել կայուն տնտեսական զարգացման պայմանները և աջակցել ներառական աճին, հատկապես գյուղական շրջաններում:

Այս նպատակին հասնելու համար ծրագիրը գործում է հետևյալ ոլորտներում՝

*մասնավոր հատվածի զարգացում*

*աջակցություն տեխնիկական և մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի հզորացմանը,*

*տարածաշրջանային զարգացում*

Հայաստանում ծրագրի քաղաքական գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: Ծրագրի մյուս կարևոր գործընկերը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունն (ԿԳՄՍ) է:

Դուալ ՄԿՈՒ համակարգի փորձնական ներդրման աջակցության ծրագրերն իրականացվում են հետևյալ ոլորտներում՝

*զբոսաշրջություն*

*գինեգործություն*

*ճարտարագիտություն*

*ՏՏ*

Results from the pilots of these dual-organised short-term training courses will be upscaled geographically and for the logistics sector. They will be further consolidated and sustainably anchored in the system, and will support improvement of the legal and regulatory framework.

The introduction of a dual-organised VET system in Armenia is inspired by the German model but takes into consideration local developments in VET and the structure of the private sector. According to this methodology, a cooperation framework between public and private sectors is established, a skills analysis in selected sectors and the identification of training needs are carried out. Additionally, the methodology ensures quality of the trained staff and skills recognition by the private sector.

GIZ supports the institutional setup of qualifications in VET colleges and the organisation of work-based learning (WBL) in private companies, as well as human capacity development measures for VET teachers and in-company instructors in the private sector.

MoESCS also refers to the GIZ methodology on implementing the dual approach for other projects in the VET system, which are mainly funded by the EU.

Այս կարճաժամկետ վերապատրաստման դասընթացների փորձնական ներդրման արդյունքները կընդլայնեն աշխարհագրությունը: Դրանք հետագայում կամփոփվեն և կայուն կամրապնդվեն համակարգում՝ աջակցելով նորմատիվ իրավական բազայի կատարելագործմանը:

Հայաստանում դուալ ՄԿՈՒ համակարգի ներդրման համար հիմք է հանդիսացել գերմանական մոդելը՝ միաժամանակ հաշվի առնելով ՄԿՈՒ ոլորտի տեղական զարգացումներն ու մասնավոր հատվածի կառուցվածքը: Արդյունքում ստացված մեթոդաբանությունը ենթադրում է պետական և մասնավոր հատվածների միջև համագործակցային շրջանակի ստեղծում, ընտրված ոլորտներում հմտությունների վերլուծություն և վերապատրաստման կարիքների բացահայտում: Բացի այդ, մեթոդաբանությունը երաշխավորում է, որ վերապատրաստված անձնակազմի որակն ու հմտությունները կճանաչվեն մասնավոր հատվածի կողմից:

GIZ-ն աջակցում է ՄԿՈՒ քոլեջներում որակավորման չափանիշների ձևավորմանն ու մասնավոր ընկերություններում աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպմանը, ինչպես նաև ՄԿՈՒ հաստատությունների ուսուցիչների և ձեռնարկություններում հրահանգիչների հմտությունների հզորացմանը:

ԿԳՄՍ-ն վկայակոչում է նաև ՄԿՈՒ համակարգի այլ նախագծերի նկատմամբ դուալ մոտեցում կիրառելու վերաբերյալ GIZ-ի մեթոդաբանությունը: Այդ նախագծերը հիմնականում ֆինանսավորվում են ԵՄ-ի կողմից:

## Hannes Cassens

PSD TVET Programme Director

*"The PSD TVET Programme, implemented by GIZ on behalf of the German Government, adopts an integrated approach in employment promotion, addressing both the supply and demand side of the labour market.*

*PSD TVET´s assistance is focusing primarily on involving the private sector in technical vocational education and training - Dual TVET.*

*We facilitate dialogues between the private sector and state institutions, support VET legislation towards a more demand-oriented education and training, help in ensuring quality standards in VET and in building the appropriate institutional context.*

*We have started piloting the system since 2017 in Armenia and now we already yield the first tangible results, featured, and presented in this booklet.*

*As GIZ, we are committed within our mandate to continue supporting our state, public and private partners to anchor the dual education in the Armenian VET system and thus contribute to sustainable economic development and employment promotion".*



## Հաննես Քասընս

ՄՀՋ ՄԿՈՒ ծրագրի տարածաշրջանային ղեկավար

*«Գերմանիայի կառավարության պատվիրակմամբ՝ GIZ-ի կողմից իրականացվող ՄՀՋ ՄԿՈՒ ծրագիրը կիրառում է զբաղվածության խթանմանը միտված Գերմանիայի զարգացման համագործակցության ինտեգրված մոտեցումը՝ անդրադառնալով աշխատուժի շուկայի և՛ առաջարկին, և՛ պահանջարկին:*

*ՄՀՋ ՄԿՈՒ-ի աջակցությունը հիմնականում մասնավոր հատվածի ներգրավվածության խթանումն է մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտում, որը մենք անվանում ենք դուալ կրթություն:*

*Մենք աջակցում ենք մասնավոր հատվածի և պետական կառույցների միջև երկխոսության հաստատմանը, ինչպես նաև օժանդակում ՄԿՈՒ օրենսդրական բարեփոխումներին՝ նպատակ ունենալով բարելավել պահանջարկի վրա հիմնված մասնագիտական կրթության կազմակերպումը՝ ապահովելով որակի չափորոշիչների կիրառումը և համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի կայացումը:*

*Հայաստանում դուալ կրթական համակարգի փորձարկումը սկսել ենք 2017թ. և արդեն իսկ ունենք շոշափելի արդյունքներ, որոնք ներկայացված են սույն գրքույկում:*

*Որպես GIZ՝ մենք հանձնառու ենք մեր մանդատի շրջանակում շարունակել աջակցությունը պետական, հանրային և մասնավոր հատվածներին՝ դուալ կրթությունը Հայաստանում ներդնելու և այդ ճանապարհով երկրում կայուն տնտեսական զարգացումն ու զբաղվածությունը խթանելու նպատակով»:*

## Aram Babayan

GIZ, PSD TVET, Team Leader Armenia

*"In case of dual education, a student not only receives theoretical knowledge in the classroom, but also spends 50% to 60% of all the learning course in a private company. Our goal as GIZ will be to expand the geography of the project through PSD TVET programme, that is, both to include new colleges and scale up the geography of private companies, so that more companies engage in the dual education system".*

## Yulia Stakyan

GIZ, PSD TVET, Programme Expert

*"Work-based learning concept is at the core of the dual system. In this regard, the introduction of the system will be one of the most effective steps to improve the quality of education.*

*Considering the current processes of the generation change and introduction of new technologies, the dual system will indeed give the youth opportunities to be more competitive in the labour market. We are sure that the system will enable our students to stay in their regions and develop them, be more successful and have better prospects".*



## Արամ Բաբայան

GIZ, ՄՀՁ ՄԿՈՒ, Հայաստանյան թիմի ղեկավար

*«Դուալ կրթության դեպքում ուսանողը, լսարանում տեսական գիտելիքներ ստանալուց բացի, իր ուսումնառության ընթացքի 50-60%-ն անցկացնում է մասնավոր ընկերությունում: Մեր՝ GIZ-ի նպատակն է ընդլայնել նախագծի աշխարհագրությունը ՄՀՁ ՄԿՈՒ ծրագրի միջոցով՝ ներառելով նոր քոլեջներ և ընդլայնելով մասնավոր ընկերությունների աշխարհագրությունը՝ այդպիսով հնարավորություն տալով ավելի մեծ թվով ընկերությունների մասնակցելու դուալ կրթական համակարգին»:*

## Յուլիա Ստակյան

GIZ, ՄՀՁ ՄԿՈՒ, Ծրագրի փորձագետ

*«Աշխատանքի վրա հիմնված ուսուցման հայեցակարգն ընկած է դուալ համակարգի հիմքում: Այս տեսանկյունից, համակարգի ներդրումը կդառնա կրթության որակի բարելավմանն ուղղված ամենաարդյունավետ քայլերից մեկը:*

*Հաշվի առնելով սերնդափոխության և նոր տեխնոլոգիաների ներդրման հետ կապված գործընթացները՝ դուալ համակարգը, իսկապես, աշխատաշուկայում մրցունակ լինելու ավելի շատ հնարավորություններ կընձեռի երիտասարդներին: Մենք համոզված ենք, որ դուալ կրթական համակարգը հնարավորություն կտա մեր ուսանողներին մնալ իրենց տարածաշրջաններում, զարգացնել դրանք, ավելի հաջողակ լինել և ավելի լավ հեռանկարներ ունենալ»:*

# WHAT IS DUAL TVET?

# ԻՆՉ Է ԴՈՒԱԼ ՄԿՈՒ-Ն

Dual VET system implies that the learning process takes place at two (duo in Latin means *two*) institutions - a VET school (college, vocational school, etc.) , and a private company.

Increasing digitalisation and technological change requires workers to continually acquire new sets of skills, to prevent them from being at risk of losing their jobs. Providing people, particularly young people, with the skills that are currently in demand is crucial in paving their way towards decent employment.

WBL, organised as part of dual-organised VET with the private sector, helps provide people with the required skills, and with the practical experience needed to find employment and keep up with changing skills requirements. Learning through work processes contributes to the development of a comprehensive and employable skillset, making employees less likely to be made redundant in times of economic crises.

However, in many countries it is challenging to get companies to cooperate with the public VET system, and thereby to provide such opportunities for students and invest in skills development. Keeping companies engaged and involving new companies in WBL is especially difficult in and after an economic crisis caused by the COVID-19 pandemic.

Դուալ ՄԿՈՒ համակարգը ենթադրում է, որ ուսումնառության գործընթացը տեղի է ունենում երկու (duo լատիներենում նշանակում է *երկու*) հաստատություններում՝ ՄԿՈՒ դպրոցում (քոլեջ, ուսումնարան և այլն) և մասնավոր ընկերությունում:

Թվայնացման և տեխնոլոգիական փոփոխությունների աճը պահանջում է, որ աշխատողներն անընդհատ նոր հմտություններ ձեռք բերեն՝ կանխելու համար աշխատանքը կորցնելու ռիսկերը: Երիտասարդներին ներկայում պահանջարկ վայելող հմտություններով ապահովելը կարևոր նշանակություն ունի՝ արժանավայել աշխատանք գտնելու ճանապարհին:

Աշխատանքի վրա հիմնված ուսուցումը՝ որպես մասնավոր հատվածի հետ իրականացվող դուալ ՄԿՈՒ-ի մաս, օգնում է ապահովել մարդկանց պահանջվող հմտություններով և գործնական փորձով, որն անհրաժեշտ է աշխատանք գտնելու և հմտությունների՝ օրեցօր փոփոխվող պահանջները բավարարելու համար: Աշխատանքային գործընթացների միջոցով սովորելը նպաստում է համապարփակ և օգտակար հմտությունների զարգացմանը՝ նվազեցնելով տնտեսական ճգնաժամի պայմաններում աշխատանքից ազատման ռիսկը:

Այդուհանդերձ, շատ երկրներում ընկերություններին բարդ է համոզել համագործակցել պետական ՄԿՈՒ համակարգի հետ՝ ուսանողներին տրամադրել նման հնարավորություններ ու ներդրումներ կատարել նրանց հմտությունների զարգացման մեջ: COVID-19 համաճարակի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամն էլ ավելի է դժվարացրել աշխատանքի վրա հիմնված ուսուցման գործընթացում ներգրավված ընկերություններին պահելը և նոր ընկերություններ ներգրավելը:

# PILOTING OF DUAL VET IN ARMENIA: RESULTS AND STORIES

# ԴՈՒԱԼ ՄԿՈՒ-Ի ՓՈՐՁՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Based on preparatory steps and assessments, PSD TVET in cooperation with MoESCS has launched 12 long-term Dual VET courses in 10 VET institutions for selected specialisations in winemaking, tourism, and IT/precision engineering sectors.

In addition to long-term programmes, PSD VET supported the piloting of 3 short-term dual VET courses at 4 VET colleges, catering to the needs of private sector companies. These short-term courses (duration 4-5 months) are mainly focused on introducing new professions. The role of short-term programmes is very important in terms of continuous and lifelong learning as they allow for responding very quickly to the gaps and demands for specific positions in private companies.

Besides, in 2018 an international TVET Conference “Skills for Business and Business for Skills” has been organised and held with support of PSD TVET. It hosted over 200 speakers, presenters and guests from Europe, Russia, and CIS. As a result, recommendations for the TVET sector development in Armenia were designed and implemented.

ՄՀՁ ՄԿՈՒ-ն, հիմք ընդունելով նախապատրաստական քայլերն ու գնահատականները, ԿԳՄՍՆ-ի հետ համատեղ գործարկել է 12 երկարաժամկետ դուալ դասընթաց 10 ՄԿՈՒ հաստատություններում՝ գինեգործության, զբոսաշրջության և ՏՏ/ճշգրիտ ճարտարագիտության ոլորտներում ընտրված մասնագիտացումների համար:

Երկարաժամկետ ծրագրերից բացի, ՄՀՁ ՄԿՈՒ-ն աջակցել է 4 ՄԿՈՒ քոլեջներում 3 դուալ կարճաժամկետ դասընթացների փորձնական ներդրմանը՝ բավարարելով մասնավոր հատվածի ընկերությունների կարիքները:

Այս կարճաժամկետ դասընթացները (4-5 ամիս տևողությամբ) հիմնականում միտված են նոր մասնագիտությունների ստեղծմանը: Կարճաժամկետ ծրագրերը կարևոր են ամբողջ կյանքի ընթացքում շարունակական ուսումնառության տեսանկյունից, քանի որ թույլ են տալիս շատ արագ արձագանքել մասնավոր ընկերություններում որոշակի թափուր աշխատատեղերի առաջացմանն ու դրանց պահանջներին:

Միաժամանակ, ՄՀՁ ՄԿՈՒ-ի աջակցությամբ 2018-ին կազմակերպվել և անցկացվել է «Հմտություններ բիզնեսի համար, բիզնես՝ հմտությունների համար» մասնագիտական կրթության և ուսուցման միջազգային համաժողովը: Այն շուրջ 200 բանախոս, հաղորդավար և մասնակից է հյուրընկալել Եվրոպայից, Ռուսաստանից և ԱՊՀ երկրներից: Համաժողովի արդյունքում, Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի զարգացման վերաբերյալ առաջարկներ են մշակվել և կյանքի կոչվել:

## Number of students and colleges piloting dual VET

## Դուալ ՄԿՈՒ պիլոտավորող քոլեջների և ուսանողների թիվը






## Key monitoring results

## Մշտադիտարկման հիմնական արդյունքները



# DUAL VET IN WINEMAKING

# ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Դուալ կրթություն՝
Երաշխավորված աշխատանք

DUAL

In the field of winemaking the dual system was piloted at Vayots Dzor Regional State College.

*When we drink the wine, we have made we already feel that flaws, what we did wrong in the wine or grapes. I hope that in the future I will have my own factory and make my wine to prove to everyone that a woman can also become a good winemaker.*

- Mariam Tadevosyan –Vayots Dzor Regional State College

*I want to develop winemaking in Yeghegnadzor and be a famous winemaker as my great grandfather was, and continue his work and treat the wine I make to people.*

- Argishti Zhamkochyan – Student at Vayots Dzor Regional State College

*Having the support of GIZ, the college was able to reach out to certain institutions of private sector. Today we could display those wines that were produced in the college by students with the help of their winemaker master and the German expert, and those wines, which are produced in the factories.*

- Argam Dovlatyan – Director of Vayots Dzor Regional State College

*Today the biggest problem is to find a specialist, and will tell you more, to find such a specialist, who meets your standards, that is, those standards, that we have set as an organic producer both in the vineyards and in winemaking. Exchange of such experience, and bringing of the new staff also promotes the expansion of business for us.*

- Artem Parseghyan – "Trinity Canyon Vineyards" chief winemaker



*«Երբ մենք ենք մեր պատրաստած գինին խմում, արդեն զգում ենք թերությունները, թե ինչն ենք սխալ արել գինու կամ խաղողի մեջ: Հուսով եմ, որ հետագայում իմ սեփական գործարանը կունենամ և կստանամ իմ գինին, որով ես բոլորին կապացուցեմ, որ կինը կարող է նաև լավ գինեգործ դառնալ»:*

- Մարիամ Թադևոսյան, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ

*«Ես ուզում եմ Եղեգնաձորում զարգացնել գինեգործությունն ու հայտնի գինեգործ լինել, ինչպես մեծ պապիկս էր: Ես ցանկանում եմ շարունակել նրա գործը և իմ պատրաստած գինին մարդկանց հյուրասիրել»:*

- Արգիշտի Ժամկոչյան, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ

*«Ունենալով GIZ-ի աջակցությունը՝ քոլեջը կարողացել է կապ հաստատել մասնավոր հատվածի որոշակի կառույցների հետ: Այսօր մենք կարողանում ենք ցուցադրել այն գինիները, որոնք արտադրվել են քոլեջում՝ ուսանողների կողմից՝ իրենց գինեգործ վարպետի և գերմանացի փորձագետի աջակցությամբ, և այն գինիները, որոնք արտադրվում են գործարանում»:*

- Արգամ Դովլաթյան, Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն

*«Այսօր ամենամեծ խնդիրը մասնագետ գտնելն է և, ավելին ասեմ, գտնել այնպիսի մասնագետ, որը համապատասխանում է քո ստանդարտներին, այսինքն այն ստանդարտներին, որոնք մենք՝ որպես օրգանիկ արտադրող, դրել ենք թե՛ գինիների, և թե՛ գինեգործության մեջ: Այսպիսի փորձի փոխանակությունը և նոր կադրերի առաջբերումը նպաստում է մեր բիզնեսի զարգացմանը»:*

- Արտեմ Պարսեղյան, «Տրինիտի Կանյոն Այգիներ»-ի ավագ գինեգործ

# DUAL VET IN TOURISM

# ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

DUAL

Դուալ կրթություն՝ երաշխավորված աշխատանք

Yerevan State College of Humanities

Երևանի պետական հումանիտար քոլեջ

188

164

Marriott Armenia Hotel,
Մարիոթ Արմենիա հյուրանոց,
Tsakhkadzor Marriott Hotel,
Ծաղկաձորի Մարրիոթ Հյուրանոց,
Alexander Hotel,
Ալեքսանդր հյուրանոց,
Radisson Blu Yerevan Hotel,
Ռեդիսոն Բլու Երևան հյուրանոց,
Doubletree by Hilton Hotel
Դաբլթրի բայ Հիլթոն հյուրանոց

Total: 30 companies

Ընդհանուր՝ 30 կազմակերպություն

Yerevan N2 Regional State College

Երևանի Տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ

46

43

Golden Palace Hotel Aghveran,
Գոլդեն փելիս, Հոթել Աղվերան,
I Center LLC,
Էլ ընդ Այ Սենթր ՍՊԸ,
Velofirma LLC
Վելոֆիրմա ՍՊԸ

Total: 4 companies

Ընդհանուր՝ 4 կազմակերպություն

Yerevan N6 State Craftsmanship College

Երևանի N6 արհեստագործական պետական ուսումնարան

52

18

"Aries Lunch" LLC
« ԱՐԻԵՍ ԼԱՆՉ» ՍՊԸ

Total: 1 company

Ընդհանուր՝ 1 կազմակերպություն



Gyumri N4 State Craftsmanship College

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան

47

8

"Gyumri Commercial Center",
«Գյումրի Քոմերշլ Սենթր» ՍՊԸ,
"Pizza Tashir",
«Պիցցա Տաշիր» ՍՊԸ,
"Miasin" Foundation
«Միասին» հիմնադրամ

Total: 22 companies

Ընդհանուր՝ 22 կազմակերպություն

Shirak Regional State College

Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ

7

3

"Berlin" Guest House LLC,
«Բեռլին» հյուրերի տուն ՍՊԸ,
Station LLC
Սթեյշն ՍՊԸ

Total: 2 companies

Ընդհանուր՝ 2 կազմակերպություն

Armenian-Greek State College

Երևանի հայ-հունական պետական քոլեջ

86

56

Angels Travel,
«ԷՆՋԼՍ ԹՐԵՎԼ» ,
National Hotel,
«ՆԱՑԻՈՆԱԼ» ՀՅՈՒՐԱՆՈՑ,
Aviatrans
ԱՎԻԱՏՐԱՆՍ

Total: 3 companies

Ընդհանուր՝ 3 կազմակերպություն

Tavush Regional State College

Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ

25

11

Total: 3 companies

Ընդհանուր՝ 3 կազմակերպություն

“Artsrun Khojumyan”,
«Արծրուն Խոջումյան» ԱՁ,
Lastiver Desert,
«Լաստիվեր անապատ» ԱՁ,
Tavush Tourism Development and Research Center
«Տավուշի տուրիզմի զարգացման և հետազոտության կենտրոն»

Kotayk Regional State College ional State College

Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ

45

29

Total: 4 companies

Ընդհանուր՝ 4 կազմակերպություն

Tsaghkadzor Marriott Hotel,
Ծաղկաձորի Մարիոթ Հյուրանոց,
Alva Hotel and Spa
Tsaghkadzor Hotel,
«Ալվա» հոթել և սպա Ծաղկաձորի հյուրանոց
Aghveran Resort
«Աղվերան Ռեզորթ»

*I have chosen this profession to introduce the peculiarities, the beautiful nature and history of our town Ijevan, Tavush region, to the tourists.*

- Monika Mehrabyan, Tavush Regional State College

*As Shirak region, especially Gyumri is unique with its culture, that's why I got excited and chose this department so that I can introduce the culture of my city to the tourists and attract them to to Gyumri. My goal after graduating is to develop bicycle tourism in Shirak region, which will be a new branch in tourism.*

- Julieta Stepanyan, student at Shirak Regional State College

*In the case of dual education, the most important thing here is that the students already gain that practical knowledge at the specific employer. Employers are very much interested to engage students in practice transferring necessary knowledge and skills and training specialists for them on the spot.*

- Artak Aghbalyan – Head of the Department of Primary and Secondary Vocational Education

*Tourism more than requires a practical, hands-on approach during the development of the specialist and this system is really the tool, that will give the specialists meeting the needs of the time that our market needs today.*

- Anahit Voskanyan – Tourism Product Development Expert of Tourism Committee

*Especially in the hotel business it is very important to get to know all the circles because you cannot become a good manager if you don't know what the room furnishings and cleanliness mean. Being familiar with practical field, already having skills they are more competitive in the labour market and can find a job more easily.*

- Alexan Ter-Minasyan – Director of "Berlin Art Hotel"



*«Ընտրել եմ այս մասնագիտությունը, որպեսզի զբոսաշրջիկներին ներկայացնեմ մեր Իջևան քաղաքի, Տավուշի մարզի առանձնահատկությունները, գեղեցիկ բնությունն ու պատմությունը»:*

- Մոնիկա Մեհրաբյան, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ

*«Քանի որ Շիրակի մարզը, հատկապես Գյումրին, առանձնահատուկ է իր մշակույթով, այդ պատճառով էլ ես ոգևորվեցի և ընտրեցի այս բաժինը, որպեսզի կարողանամ ներկայացնել տուրիստներին իմ քաղաքի մշակույթը և դեպի Գյումրի ներգրավեմ: Ավարտելուց հետո իմ նպատակն է Շիրակի մարզում հեծանվային տուրիզմը զարգացնել, որը նոր ճյուղ կլինի զբոսաշրջության մեջ»:*

- Ջուլիետա Ստեփանյան, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող

*«Դուալ կրթության դեպքում ամենակարևորն այն է, որ պրակտիկ գիտելիքներն ուսանողն արդեն ձեռք է բերում կոնկրետ գործատուի մոտ: Գործատուների մոտ բավականին շահագրգռվածություն կա՝ ուսանողներին պրակտիկայի վերցնելու, անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու և հենց տեղում իրենց համար մասնագետներ պատրաստելու»:*

- Արտակ Աղբալյան, ԿԳՄՍՆ Նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ

*«Զբոսաշրջությունն ավելի քան պահանջում է գործնական, պրակտիկ մոտեցում հենց մասնագետի՝ արդեն իսկ կայացման ընթացքում, և այս համակարգն իսկապես այն գործիքն է, որը կտա ժամանակի պահանջմունքներին համապատասխանող այն մասնագետներին, որի կարիքը մեր շուկան այսօր ունի»:*

- Անահիտ Ոսկանյան, Զբոսաշրջության կոմիտե, Զբոսաշրջային արդյունքի զարգացման փորձագետ

*«Հատկապես հյուրանոցային գործի մեջ շատ կարևոր է ծանոթանալ բոլոր օղակներին, որովհետև չի կարելի դառնալ լավ մենեջեր, եթե չգիտես՝ ինչ է նշանակում սենյակի կահավորանքը և մաքրությունը: Պրակտիկ դաշտին ծանոթ լինելով, արդեն հմտություններ ունենալով՝ նրանք ավելի մրցունակ են աշխատաշուկայում և ավելի հեշտ կարող են աշխատանք գտնել»:*

- Ալեքսան Տեր-Մինասյան, «Բեռլին արտ հյուրանոց»-ի տնօրեն



# DUAL VET IN IT

# ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏՏ-ՈՒՄ

DUAL
Dual Education
Guaranteed Employment!

The elements of the new system for Armenia have been piloted at Shirak Regional State College, helping to create competitive IT workforce.




*My dream is to become a good programmer, to create a website with which I can introduce Gyumri to the whole world. Having practical training with the employer gives us the opportunity to be more flexible.*

- Mariam Grigoryan – Student at Shirak Regional State College

*I have created a walking stick that is the only one of its kind at the moment. There are no such models. The advantage of this is that blind man can move in space with the help of acoustic signals.*

- Hayk Tadevosyan – Student at Yerevan State College of Informatics

*I will create water-resistant and fire-resistant robots that will help stop fires in the woods.*

- Yurka Minasyan - Student at Lori Regional State College

*Our students had a real opportunity of practice parallel to the theoretical training through engaging in specific projects with specific employers, in relevant private companies.*

- Robert Abrahamyan – Director of Yerevan State College of Informatics

*The students integrate better, better understand the whole working process, which is impossible to understand in the educational institution.*

- Gurgen Gharibyan – Founding Director of Brain Fors IT company



*«Իմ երազանքն է դառնալ ծրագրավորող, ստեղծել կայք, որով կկարողանամ Գյումրին ներկայացնել ամբողջ աշխարհին: Գործատուի մոտ պրակտիկան անցնելը մեզ հնարավորություն է տալիս ավելի ճկուն լինել»:*

- Մարիամ Գրիգորյան, Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող

*«Ստեղծել եմ մի ձեռնափայտ, որն իր նմանակների մեջ միակն է տվյալ պահին: Նմանատիպ մոդելներ չկան: Ձեռնափայտի առավելությունն այն է, որ կույր մարդը կարողանում է շարժվել տարածության մեջ՝ ձայնային ազդանշանների օգնությամբ»:*

- Հայկ Թադևոսյան, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի ուսանող

*«Ես կստեղծեմ ջրակայուն և հրակայուն ռոբոտներ, որոնք կօգնեն անտառներում մարել հրդեհները»:*

- Յուրկա Մինասյան, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջի ուսանող

*«Մեր ուսանողները ռեալ հնարավորություն են ստացել՝ համապատասխան մասնավոր կազմակերպություններում, տեսական դասընթացին զուգահեռ, կոնկրետ նախագծերի և կոնկրետ մասնագետների հետ պրակտիկ գործունեություն իրականացնել»:*

- Ռոբերտ Աբրահամյան, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի տնօրեն

*«Ուսանողներն ավելի լավ են ինտեգրվում և ավելի լավ են հասկանում ամբողջ աշխատանքային գործընթացը, որը հնարավոր չէ ուսումնական հաստատությունում հասկանալ»:*

- Գուրգեն Ղարիբյան, «Բրեյն Ֆորս» ՏՏ ընկերության հիմնադիր տնօրեն

# DUAL VET IN ENGINEERING (MECHATRONICS)

# ԴՈՒԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ (ՄԵԽԱՏՐՈՆԻԿԱ)

DUAL
Dual Education
Guaranteed Employment!

The elements of the new system for Armenia have been piloted at Yerevan N6 State Craftsmanship College, Lori Regional State College, Tavush Regional State College.

Հայաստանում նոր համակարգի տարրերը ներդրվել են Երևանի թիվ 6 արհեստագործական քոլեջում, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջում և Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջում:

| | | | |
|---|---|---|---|
| Yerevan N6 State Craftsmanship College<br>Երևանի N6 արհեստագործական պետական ուսումնարան | 0 | 22 | Autodas Enterprise LLC<br>Ավտոդաս ձեռնարկություն ՍՊԸ |
| Lori Regional State College<br>Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ | 2 | 28 | Elpida Electronics,<br>Vanadzor Technology Center,<br>COAF Smart Center |
| Tavush Regional State College<br>Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ | 0 | 13 | Artak Pirumyan,<br>«Արտակ Փիրումյան » ԱՁ,<br>Ijjan BUAT CJSC<br>«Իջևան ԲՈՒԱՏ» ՓԲԸ |





*Dual education system gives me a more advanced version of my profession which I can later use in my service centre. I hope that in the future I will have my own service centre where I will look forward to the students' visit to my service centre as practice and I will teach them with pleasure what has been given to me.*

- Derenik Khachatryan - Student at College of National Polytechnic University of Armenia

*«Դուալ կրթական համակարգն ինձ տալիս է իմ մասնագիտության ավելի խորացված տարբերակը, որը հետագայում ես կարող եմ օգտագործել իմ իսկ սպասարկման կենտրոնում: Հուսամ՝ ապագայում կունենամ իմ սպասարկման կենտրոնը, որտեղ կակնկալեմ ուսանողների այցը իմ սպասարկման կենտրոն որպես պրակտիկա և կաճույքով կսովորեցնեմ նրանց այն, ինչ փոխանցվել է ինձ»:*

- Դերենիկ Խաչատրյան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի քոլեջի ուսանող

*I call on all employers to get involved in similar projects. All of us should be involved to train specialists so that our country is rich in professionals.*

- Karen Nersisyan – founder of GNGK group

*«Կոչ եմ անում բոլոր գործատուներին ներգրավվել նմանատիպ ծրագրերի մեջ: Բոլորս պետք է ներգրավվենք, որպեսզի մասնագետներ պատրաստենք, որպեսզի մեր երկիրը հարուստ լինի մասնագետներով»:*

- Կարեն Ներսիսյան, «ՁԻԷՆՁԻՔԵՅ գրուպ»-ի հիմնադիր

*In case of dual approach graduates acquire professional skills faster as they get training right at the workplace.*

- Hayk Brutyan – Director of Tavush Regional State College

*«Դուալ ուսումնական մոտեցման դեպքում շրջանավարտներն ավելի արագ են ձեռք բերում մասնագիտական հմտությունները, քանի որ հենց աշխատանքի վայրում են անցնում իրենց ուսուցումը»:*

- Հայկ Բրուտյան, Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի տնօրեն





# LEGAL REFORMS IN VET

# ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ՄԿՈՒ ՈԼՈՐՏՈՒՄ

## Nora Sargsyan

GIZ, PSD TVET, Programme Expert

*The legal framework of the VET system should establish essential prerequisites that enable the training of competitive workers meeting the demands of the labour market. The legislative reforms should be aimed at promoting the work-based learning, the cooperation format with the leading private companies as well as revision of education management and funding systems which is imperative for the strategic development of VET institutions and training of highly qualified specialists.*

Since the 1990s, new economic relations and the liberalisation of the education system have created a large gap between VET and labour market demands.

Educational achievement has become a personal priority for many people; in turn, this has distorted perceptions of different levels of education. The value of higher education has become over-estimated, while VET suffers from a poor image.

All the stakeholders acknowledge an overall skills mismatch and the need to align VET with labour market needs and technological developments.

This is emphasised in many official documents. However, the skills mismatch is poorly understood and no effective mechanisms to identify the current or future demand are in place.

On the school side, insufficient investment, the low levels of funding allocated to VET and the lack of incentives for employers to invest in VET have all caused the current situation. A significant proportion of the technical equipment, labs and teaching materials used in VET colleges is of poor quality and outdated. VET colleges do not have the capacity to develop autonomously and teachers lack opportunities for continuing professional development. Collectively, these factors are detrimental to the overall modernisation of education.

On the business side, the private sector has lost its links to VET. The education system has been viewed as a simultaneously evolving business structure. In this context, bringing VET and the economy closer together and developing new means of collaboration seems a must.

Against this background, the Government of the Republic of Armenia adopted the bylaw “On Approving the Social Partnership Concept in VET” in 2008, which set a legal framework for involving the private sector in VET. The aim of the measure was to evaluate all activities in the field of VET, particularly the engagement of business representatives in the processes of velaborating policies, programmes and educational standards and the management of VET colleges.



## Նորա Սարգսյան

GIZ, ՄՀՁ ՄԿՈՒ ծրագրի փորձագետ

*ՄԿՈՒ ոլորտի օրենսդրությունը պետք է անհրաժեշտ նախադրյալներ ստեղծի աշխատաշուկայի կարիքներին համապատասխանող և մրցունակ կադրերի պատրաստման համար: Օրենսդրական բարեփոխումները պետք է միտված լինեն խթանելու աշխատանքի վրա հիմնված կրթությունը, ոլորտի առաջատար մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցային ձևաչափը, կրթության կառավարման և ֆինանսավորման համակարգերի վերանայումը, ինչը ՄԿՈՒ հաստատությունների ռազմավարական զարգացման և որակյալ կադրերի պատրաստման հրամայական է:*

1990-ականներից ի վեր՝ տնտեսական նոր հարաբերություններն ու կրթական համակարգի ազատականացումը մեծ խզում են առաջացրել ՄԿՈՒ-ի և աշխատաշուկայի պահանջների միջև: Կրթական նվաճումները շատերի համար դարձել են անձնական առաջնահերթություն, որն էլ, իր հերթին, խեղաթյուրել է կրթության տարբեր մակարդակների վերաբերյալ ընկալումը: Բարձրագույն կրթության արժեքը դարձել է գերագնահատված, մինչդեռ ՄԿՈՒ-ն ցածր հեղինակություն է վայելում:

Շահագրգիռ բոլոր կողմերը գիտակցում են հմտությունների ընդհանուր անհամապատասխանությունը և ՄԿՈՒ-ն աշխատաշուկայի պահանջներին ու տեխնոլոգիական զարգացումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությունը: Այս մասին նշված է բազմաթիվ պաշտոնական փաստաթղթերում: Այդուհանդերձ, հմտությունների անհամապատասխանությունը լայնորեն ուսումնասիրված չէ, իսկ ներկա կամ ապագա պահանջարկը բացահայտելու արդյունավետ մեխանիզմները բացակայում են:

Դպրոցների տեսանկյունից՝ անբավարար ներդրումները, ՄԿՈՒ-ին հատկացված ֆինանսավորման ցածր մակարդակը և գործատուների համար ոլորտում ներդրումներ կատարելու անհրաժեշտ խթանների բացակայությունը հանգեցրել են ներկայիս իրավիճակի առաջացմանը: ՄԿՈՒ քոլեջներում օգտագործվող տեխնիկական սարքավորումների, լաբորատորիաների և ուսումնական նյութերի զգալի մասն անորակ է և հնացած: ՄԿՈՒ քոլեջներն ինքնավար զարգանալու կարողություն չունեն, իսկ ուսուցիչները բավարար հնարավորություններ չունեն՝ շարունակելու մասնագիտական զարգացումը: Այս բոլոր գործոնների հանրագումարը խոչընդոտում է կրթական համակարգի ընդհանուր արդիականացումը:

Բիզնեսի տեսանկյունից՝ մասնավոր հատվածը կորցրել է ՄԿՈՒ-ի հետ իր կապը: Կրթական համակարգը դիտարկվել է որպես զուգահեռ զարգացող բիզնես կառուցվածք: Այս համատեքստում անհրաժեշտ է մոտեցնել ՄԿՈՒ-ն և տնտեսությունը, ինչպես նաև համագործակցության նոր եղանակներ մշակել:

Այս ֆոնին, ՀՀ կառավարությունը 2008-ին ընդունել է «ՄԿՈՒ ոլորտում սոցիալական գործընկերության հայեցակարգը հաստատելու մասին» ենթաօրենսդրական ակտը, որը սահմանում է միջին և մասնագիտական կրթության մեջ մասնավոր հատվածի ներգրավման իրավական շրջանակը: Միջոցառման նպատակն էր գնահատել ՄԿՈՒ ոլորտի բոլոր գործողությունները, մասնավորապես՝ բիզնեսի ներկայացուցիչների ներգրավումը ոլորտային քաղաքականության, ծրագրերի և կրթական ստանդարտների մշակման գործում, ինչպես նաև ՄԿՈՒ քոլեջների կառավարման գործընթացում:

# CAREER ORIENTATION EVENTS FOR FEMALE STUDENTS OF SCHOOLS

# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

The PSD TVET Programme in cooperation with Career Lab NGO, initiated career orientation and planning events for 7-10th grade female school students from Vanadzor, Gyumri, and Yerevan.

The career orientation visits were organised within the dual education popularisation campaign supported by PSD TVET.

The awareness-raising visits were aimed at encouraging female students' engagement in the sectors that have traditionally been considered as "male", for instance, Information and Communication Technologies (ICT), Robotics, and Engineering.

As a result, 60 female students were selected considering their preferences, interests, and personal skills. The visit locations were chosen on the basis of the potential of development of these professions in the relevant regions.

Thus, the participants visited Vanadzor Technology Center, Lori State Regional College (city of Vanadzor), Gyumri Technology Center, Shirak State Regional College (city of Gyumri) Engineering City (Yerevan), Yerevan State College of Informatics, as well as private companies, where they got to know about educational and employment opportunities offered in the sectors.

Career Lab ՀԿ-ի համագործակցությամբ PSD TVET ծրագիրն աջակցել է Վանաձորի, Գյումրիի և Երևանի մի շարք դպրոցների 7-10-րդ դասարանի աշակերտուհիների համար կարիերայի պլանավորման միջացառումների կազմակերպմանը և անցկացմանը:

Միջոցառումները կայացել են ՄՀՁ ՄԿՈՒ ծրագրի և ՀՀ ԿԳՄՍՆ համագործակցությամբ Հայաստանի մասնագիտական կրթական հաստատություններում դուալ համակարգի ներդրմանն ու համակարգի մասին իրազեկվածության բարձրացմանն ուղղված գործողությունների շրջանակում:

Տեղեկատվական այցերի նպատակն էր՝ խրախուսել իգական սեռի սովորողների ներգրավվածությունը մի շարք մասնագիտություններում, որոնցում ավանդաբար այն ցածր է եղել, օրինակ՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ICT), ռոբոտաշինություն և ճարտարագիտություն:

Ծրագրին մասնակցած 60 աշակերտուհիների ընտրանքը կազմվել է՝ հիմք ընդունելով նրանց հետաքրքրությունները, նախասիրությունները և անձնային տիպի համապատասխանությունը նշված մասնագիտություններին: Այցերի նախագծման ընթացքում հաշվի են առնվել նաև տվյալ մարզերում առկա նշված մասնագիտությունների զարգացման նախադրյալները:

Ընտրված մասնակիցները ծրագրի շրջանակում այցելեցին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն ու Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ, Գյումրիի տեխնոլոգիական կենտրոն և Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ, Ինժեներական քաղաք և Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ, ինչպես նաև գործատու մասնավոր ընկերություններ, որտեղ տեղեկացան ոլորտներում առաջարկվող կրթական և աշխատանքային հնարավորությունների մասին:

# VET SYSTEM AND COVID-19 PANDEMIC

# ՄԿՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԸ

Due to a nationwide lockdown caused by the COVID-19 pandemic, many aspects of public life have moved online, and VET is no exception. This has required the teachers, school managers and headteachers to improve their digital skills.
The establishment of distance learning has ensured online communication and feedback between teachers and students. However, the implementation of practical exercises, practices and WBL has been suspended.

In cooperation with the MoESCS, GIZ has scaled up its ongoing support to e-Learning in VET to tackle these challenges. The "Introduction to e-Learning" online course, which was developed by the National Network of Distance Education NGO with the support of GIZ in 2018, has been provided to around 150 VET teachers and school managers. The course equips participants with relevant digital skills for organising e-Learning and familiarises them with key components and tools.

Online solutions in education will be crucial in the future for inclusive and more equal education especially for some students in rural regions (provided that they have the necessary electronic devices and internet access), students with special needs and disabilities, and other disadvantaged groups. VET teachers and private sector in-company instructors will be further trained on how to develop and implement e-Learning with a focus on dual-organised VET.

COVID-19 համավարակի հետևանքով հայտարարված համապետական մեկուսացման պատճառով հասարակական կյանքի շատ ասպեկտներ տեղափոխվել են առցանց տիրույթ, և ՄԿՈՒ-ն բացառություն չէ: Այս հանգամանքը ուսուցիչներից, դպրոցների ղեկավարներից և տնօրեններից պահանջել է թվային հմտությունների բարելավում: Հեռավար ուսուցման հաստատումն ապահովել է ուսուցիչների և ուսանողների առցանց հաղորդակցությունն ու հետադարձ կապը: Այդուհանդերձ, գործնական վարժությունների, պրակտիկայի և աշխատանքի վրա հիմնված ուսուցման իրականացումը կասեցվել է:

GIZ-ը, համագործակցելով ԿԳՄՄՆ-ի հետ, ընդլայնել է ՄԿՈՒ ոլորտում էլեկտրոնային ուսուցմանն ուղղված իր շարունակական աջակցությունը՝ այս մարտահրավերները հաղթահարելու նպատակով: «Էլեկտրոնային ուսուցման ներածություն» առցանց դասընթացը, որը 2018-ին մշակվել է «Հեռավար կրթության ազգային ցանց» ՀԿ-ի կողմից՝ GIZ-ի աջակցությամբ, տրամադրվել է ՄԿՈՒ շուրջ 150 ուսուցիչների և դպրոցի ղեկավարների: Դասընթացը մասնակիցներին տալիս է էլեկտրոնային ուսուցման կազմակերպման վերաբերյալ համապատասխան թվային հմտություններ և ծանոթացնում նրանց հիմնական գործիքների հետ:

Կրթության առցանց լուծումներն ապագայում կարևոր դեր են խաղալու ներառական և ավելի հավասար կրթության ապահովման տեսանկյունից, հատկապես՝ գյուղական շրջանների որոշ ուսանողների համար (այն պայմանով, որ նրանք ապահովված կլինեն անհրաժեշտ էլեկտրոնային սարքերով և ինտերնետ հասանելիությամբ), հատուկ կարիքներ ունեցող և հաշմանդամություն ունեցող ուսանողների և խոցելի այլ խմբերի համար: ՄԿՈՒ ուսուցիչները և մասնավոր հատվածի հրահանգիչները լրացուցիչ կսովորեն էլեկտրոնային ուսուցման զարգացման ու իրագործման եղանակները՝ շեշտը դնելով դուալ ՄԿՈՒ-ի կազմակերպման վրա:

To ensure smooth and uninterrupted implementation of the practical component of the dual programmes in times of the pandemic, the programme has equipped the material and technical base of the colleges with latest technology.

The equipment meets the highest modern technology standards and it can be used by the private sector in future to implement cooperation projects.

Համավարակի պայմաններում դուալ ծրագրերի գործնական ուսուցման բաղադրիչը իրականացնելու նպատակով՝ ծրագրի աջակցությամբ համալրվել է քոլեջների նյութատեխնիկական բազան, ինչը նպաստել է կրթական ծրագրերի սահուն և անխափան իրականացման համար:

Տեխնիկան համապատասխանում է ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին, որը կարող է նաև հետագայում օգտագործվել մասնավոր հատվածի կողմից՝ համագործակցային ծրագրերի իրականացման նպատակով:

**Published by:**

Deutsche Gesellschaft für
Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Registered offices
Bonn and Eschborn

Private Sector Development and Technical Vocational Education and
Training in the South Caucasus (PSD TVET) programme

59 Hanrapetutyan street
0010 Yerevan, Armenia

+374 10 51 00 67

info@giz.de

www.giz.de

Responsible persons for content and publication (GIZ):
Yulia Stakyan, Sirvard Amatuni, Lilit Mheryan

Translated by: Tatevik Hovhannisyan

Design and Layout: Yana Pogosyan

Photo Credits: ©GIZ

**Commissioned by:**
German Federal Ministry for Economic Cooperation and Development (BMZ)
The opinions and conclusions expressed in this publication represent the opinion of the author(s) and are not necessarily representative of the position of the Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH.

**Printing:**

Yerevan, August 2021

**Հրատարակվել է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ/GIZ) կողմից
Գրանցված գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

Հանրապետության 59,
Երևան 0010, Հայաստան

Հեռ՝ +374 10 51 00 67

Էլ. հասցե՝ info@giz.de

Վեբկայք՝ www.giz.de

Բովանդակության և հրապարակման պատասխանատուներ (GIZ)՝
Յուլիա Ստակյան, Սիրվարդ Ամատունի, Լիլիթ Մհերյան

Թարգմանիչ՝ Տաթև Հովհաննիսյան

Դիզայն և էջադրում՝ Յանա Պողոսյան

Լուսանկարներ՝ ©ԳՄՀԸ/GIZ

**Պատվիրատու՝**
Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական
համագործակցության և զարգացման նախարարության (BMZ)

Այս հրատարակման մեջ արտահայտված կարծիքներն ու եզրակացությունները ներկայացնում են հեղինակի (հեղինակների) կարծիքը և պարտադիր չէ, որ համընկնեն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ/GIZ) դիրքորոշման հետ:

**Տպագրված է՝**

Երևան, Օգոստոս 2021